Վանահօր տիպի մէջ եւս երկուութիւն կայ, սակայն բացատրելը բաւական դժուար է. նա կրօնական մթութեան մէջ է մնում: Վերջը նրա ինչ լինելը պարզ չէ. ո՞ւր գնաց արդեօք իր պրպտումները շարունակելու: Կարծես մնաց օդի մէջ առ կախ: Եկեղեցին չկարողացաւ քանդել. քաշուեցաւ մէկ կողմ, չէզոքանալու ամբողջ աշխարհից: Նա կռուեց բոլոր գործողների դէմ, բայց միշտ բացասական մտքով. նա յաղթուեց բոլոր կողմերից, բացի մի կէտում. այդ իշխանուհին է: Նա յաղթեց Աբեղայից, յաղթուեց Ճերմակաւորից, յաղթուեց բոլոր վանականներից: Մինակ իշխանուհին էր որի դէմ անյողդողդ մնաց: Եւ նրան չենթարկուելու համար կղզիից դուրս չէր կարող դուրս գալ. կղզին թողնելուն պէս այդ կէտում եւս պիտի պարտուէր: Բայց թէ իրապէս ինչ եղաւ Վանահայրը, այդ հարցում հեղինակը ինքն իսկ որոշ չէ. իսկ ընթերցողն արդէն չէ կարող պատասխանել: Եթէ բնական մահը մարդուս ձեռքը լինէր, ես վստահ եմ որ Վանահայրը պիտի փնտռէր այդ մահը, առանց ինքասպան լինելու,– թէեւ այդպիսի մարդիկ մահից էլ կը վախենան: Նրա համար այլ եւ երկրի վրայ տեղ չկայ: Նիւթը գոյութիւն չունի նրա համար, քարն անգամ անսուրբ է եկեղեցի կառուցանելու համար. եւ մտածում է եկեղեցին իր սրտում շինել, միայն իրեն համար: Աշխարհը նրա համար գոյութիւն չունի, ուրիշը նրա համար օտար է, նրա հասարակական ջիղը մեռած է, ինչպէս սովորաբար լինում են վանական մենակեացները. ուրիշի մասին մտածելը արքայութիւնից հեռանալ կը նշանակէ: Երկնքին մօտենալու համար երկրային ամէն ինչ պէտք է մոռանալ: Նրա ողբերգական վիճակը կատարեալ է, բայց ի հարկէ ոչ իրեն համար:

Ցաւից փախչելուն պէս այլեւս նրա խօսքերը,– «հինը քանդել՝ նորը շինելու համար»,– կորցնում են իրենց հմայքն եւ մնում որպէս գեղեցիկ նախադասութիւն, որ այս դէպքում արդեն շատ կեղծ է հնչում:

Վանահօր այդ նկարագիրը իր բոլոր պակասութիւններով միասին Աբեղայի դրական նկարագրի հետ կարող է